

ՀԱՌՈՐ ՄԻԷՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 12 ՅՈՒՆԻՍ, 1929

ԹԻԻ 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՅՍՈՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ
ԷՆ ՈՒՇԱԳՐԱՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԷՆ ՄԷԿՆ Է
ԵԿԵՂԵԳԻՆԵՐԸ միացնելու շարժումը։
Պատերազմէն առաջ այս շարժումը կար
արգէն, բայց պինդագոյարէն վերջ մեծ
համեմատութիւններ և սաստիկ թափ մը
ստացաւ ան։ Քրիստոնեայ եկեղեցին
կը բաժնուի երեք խոշոր խումբերու, —
կաթոլիկ եկեղեցին, Աւետ. եկեղեցին
(200ի մօտ յարանուանութիւններով) և
Արեւելեան Հին եկեղեցիներ (Հայ Առաք.
եկեղեցի, Յոյն Օրթոտոքս, Ղըպտի, Ա-
սորի, և այլն)։ Արեւմտեան Քրիստոնէ-
ութիւնը, զոր կը ներկայացնեն առաջին
երկու եկեղեցիները, ունեցած է միշտ
յարձակողական ծաւալողական քաղա-
քականութիւն մը, զործի դաշտ ընտրե-
լով թէ՛ Արեւելքի հին եկեղեցիները եւ
թէ՛ բոլոր ոչ-քրիստոնեայ ժողովուրդ-
ները։ Իսկ երրորդ խումբը, Արեւել-
եան եկեղեցիները, որոշ շրջանէ մը վերջ
ունեցած են ինքնամփոփ կեանք մը,
մնալով միշտ պաշտպանողականի վրայ։

ԱՀԱ ԱՅՍ ԱՐՏԱՄԱՒԱԼ ՇԱՐԺՈՒՄԸ,
ծանօթ բառով միսիօնարական գործու-
նէութիւնը, կարեւոր ազդակներէն մէկը

եղած է միութենական շարժումը յա-
ռաջ բերելու մէջ։ Սահմանափակելով
մեր խօսքը միայն Աւետ. եկեղեցիին հա-
մար, այս շարժումին, համագործակցու-
թեան և միութեան ծագումին մեծա-
պէս ստատարած են միջազգային և միջ-
յարանուանական կարգ մը կազմակեր-
պութիւններ, որպիսիք են Կիրականօրեայ
Դպրոցը, Ե. Ք. Զանից Ընկերութիւնը
և. Ք. Ընկերակցութիւնը (Y. M. C. A.),
և այլն. եւ ուրիշ ոչ-կրօնական ընկե-
րային ազդակներ, որոնց թումը մեր
նպատակէն դուրս է։ Հնդկաստանի,
Չինաստանի եւ Ճապոնի նորահաս-
տատ քրիստոնէական եկեղեցիներն էին
սակայն որ այժմէական եւ անմիջա-
կան հարցի մը վերածեցին այս շարժու-
մը։ Յիշեալ երկիրներու մէջ գործող
բազմազան Աւետարանական յարան-
ուանութիւններու պատկանող միսիո-
նարները՝ իրենց դաշտը աւելի ընդար-
ձակելու, իրենց պատկանած եկեղեցին
աւելի՛ պայծառացնելու նախաձեռնե-
րութեամբ շատ անգամ ընդհանուր ա-
ւետարանչական գործին մէջ խաչածե-
ւումներու եւ բարդութիւններու պատ-
ճառ կը դառնային, քրիստոնէական
ճշմարտութեան մասին շփոթութեան
մատնելով նորագարձ քրիստոնեաները։
Արեւելքի քրիստոնեաները և շատ մը

միտիօնարներ սկսան իրենց դժգոհութիւնը յայտնել այս անպատեհութեանց մասին, գորոնք միատակար զգացին ընդհանուր աւետարանչական գործին համար: Ժընիւի Կարգի և Հաւատքի Համաժողովը ուղղութիւն և նոր թափ տուաւ այս շարժումին, որուն իբր արդիւնքը գործնական քայլեր կ'աւանդին այսօր մանաւանդ Միացեալ Նահանգներու մէջ:

ԱՅՍՊԻՍԻ ՄԻԱՑԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ արդէն կազմուած են Հնդկաստանի, Զինաստանի, Փանաասլի մէջ, մասնակի միութիւններ Մ. Նահանգներու մէջ: Զօրաւոր շարժում մը կայ նաեւ Անգլիոյ մէջ Միացեալ Ազատ Եկեղեցի մը կազմելու: Ժընիւի ժողովէն աստիճանաբար մը կրօնական համագումարներու օրակարգին մէջ էն հրատապ և կարեւոր հայեերէն մէկը եղած է եկեղեցիներու միութիւնը: Այս շարժումը եթէ այս թափով ընթանայ շատ հեռու չէ այն ժամանակը, երբ եկեղեցական միութիւնը իրականութիւն մը պիտի դառնայ, զոնէ աւետարանական եկեղեցիներու մէկ մեծ մասին մէջ:

ԲԱՅՑ ՄԵՋ ՇԱՀԱԳԻՐՈՒՈՂ ԿԵՏԸ այս է թէ արդեօք կարելի չէ՞ Հայ Առաք. և Հայ Աւետ. եկեղեցիներու մէջ ալ միութիւն մը յառաջ բերել: Այս հարցի մասին տակաւին լուրջ յօդուած չէ երևցած հայ մամուլին մէջ, թէպէտ երբեմն փափաքներ, տկար միտումներ, մշտավախութեամբ կատարուած ակնարկումներ անպակաս գտնուած են հոն: Բայց կը կարծենք որ ա'լ ժամանակը եկած է այս հարցին իր պէտք եղած կարեւորութիւնը տալու, ուսումնասիրելու զայն լրջօրէն և լայնամասօրէն, աշխատելով զրական չինիչ լուծում մը տալու անոր:

Բայց ինչպէ՞ս:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԿԵԱՆՔԻ ՈՒՂՂԱՑՈՅՑԸ

«Եւ ահա տէրը գնտակի լարով շինուած պարսպի մը վրայ կայնէր էր:» Ամովս 7.7: Ահա այս էր Ամովս մարդուրէի տեսած ահօլիքներէն մէկը: Տէրը կայնած է՝ ձեռքը գնտակ մը ունենալով: Եհովան իր քմահաճոյքին համեմատ գործող մը չէ: Առանց գնտակի լարի չէնք չի կառուցուիր: Այդպիսի չէնք մը չի կրնար կանգուն մնալ, ան կը քանդուի եթէ նոյնիսկ էն թանկագին քարերէ շինուած ալ ըլլայ: Այսու հանդերձ կան մարդիկ, անհատներ և ազգեր, որոնք առանց (ուղղացոյցի) գնտակի լար ու նենալու կը ջանան շինել կեանքի պատեր և նոյնիսկ աշտարակներ: Աստղերու շարժումներուն մէջ կարգ ու կանոն կը տեսնուի: Անոնք դիպումաժով չեն թաւալիր այս միջոցին մէջ: Եթէ միայն պատահամբ շարժելին անոնք՝ բոլոր տիեզերքը քառս մը պիտի ըլլար: Անփոփոխիլ օրէնքներ կան շոգենալի մը շարժումին և անոր անխնայութեամբ շարժումներուն մէջ: Շոգենալը ալիքներուն մէկ խաղալիքը կը դառնայ և կը կործանի եթէ այդ օրէնքները չեն յարգուիր: Կեանքն ալ այսպէս է: Մարդկային կեանքն ալ ունի իր կանոնը և զնդակի լարը, ուղղացոյցը: Բարոյական կանոնի և հոգեւոր կեանքի ուղղացոյցն է այս: Այնպէս կարողադրուած է որ մարդկային կեանքը բարոյականութեան օրէնքին վրայ հիմնուած է: Չենք կրնար գայն փոխել, եթէ նոյնիսկ մեզի կարելի ըլլար փոխել ուրիշ ամէն բան: Մեզքը կ'ապանէ, իսկ արգարութիւնը կը կենդանացնէ: Բացառութիւն չունի այս կանոնը: Ահա ասկէ յառաջ եկաւ այն կարեւոր մէկ տարբերութիւնը որ կը գտնուէր Յիսուսի և Փարիսեցիներու միջեւ: Յիսուս իբր կեանքի անփոփոխե-

լի մէկ կանոնը նկատեց բարոյականութեան ուղղացոյցը, արգարտութիւնն ու ճշմարտութիւնը: Ան յօժարեցաւ իր ամէն բանը առաւ ամէն բանէն զրկուելու, բայց երբէք մտաւազաւ մ'իսկ չը գատուեցաւ այդ ուղղացոյցէն: Իսկ Փարիսեցիները առաջին տեղը տուին իրենց անձնական շահերուն և երկրորդական արժէք մը տուին բարոյականութեան և մեծ իշխան մը չտեսան կեղծաւորութեան մէջ: Արդիւնքը ցուցուց թէ որը շիտակ էր: Տաճար քանդուեցաւ, նոյնիսկ քար քարի վրայ չմնաց, բայց խաչը բարձրացաւ:

Ահա հոս չի գտնուիր մեր ժամանակին մեծագոյն վտանգը: Մեր երիտասարդներէն քանինե՞ր կ'ապրին առանց ուղղացոյցի, և տակաւին կը կարծեն թէ կեանքի մեծ չէնք մը կը կառուցանեն: Անոնք երազներու աշխարհին մէջ կ'ապրին: Շատ բաներ պէտք են կեանքի համար, բայց ի՞նչ է կարեւորագոյնը: Կրնանք կեանքի չէնքը կառուցանել, ուրանալով բարոյականութեան ուղղացոյցը, հոգեոր կեանքի կանոնը: Առանց անոր կախիլը՝ է շինել ընտանեկան յարկը, ազգին բերդը, և կեղեցական կազմակերպութիւնը: Արդեօք չոր տեղ ջանք չ'ենք թափեր:

Ահա Յիսուս եկաւ մարգերը արթընցնելու այս մասին: Եւ մեր կոչումն ալ այս չէ՞ միթէ: Արթննանք և արթընցնենք: Ահա ասոր մէջ կը կայանայ մեր ժողովուրդին պէտքն ու վտանգը: Այնպէս ապրինք որ մարդիկ մեր նկարագրին վրայ կատարեալ վստահութիւն ունենան: Անհատի մը, ազգի մը համար ի՞նչ մեծ գանձ մը, ի՞նչ անգրաւելի բերդ մըն է այս:

Արեւի

ԼՈՒԹՅՈՒ ԼԵՒՈՆԵԱՆ

ԾՆՈՂԱԿԱՆ ՍԷՐ

Ծնողական սէրը կը բաղկանայ նախ՝ գաւակներ ունենալուն մէջ. քանզի աւաճող, կան այն պիտիներ որոնք կը զբոհուին դաւակ ունենալէ, և այս ընելով ո՛չ միայն ախոր բաւ մեղակեաց ծերութիւն մը կը պատրաստեն իրենց համար, այլ նաեւ կը մեղանշեն ընկերութեան դէմ: Շահեկան է նկատուի թէ այն երկիրներուն մէջ որ սանձարձակ նիւթ աշաշտութիւն կը տիրէ, հոն կ'անհետին օրօրոցները, բնակչութիւնը կը նուազի ու երկիրը կ'ենթարկուի օտար արշաւանքի մը: Մինչ հոն ուր կրօնք կայ՝ ընտանիքներն ալ բարգաւաճ ևն նոյն համեմատութեամբ:

Հայրական ու մայրական սէրն ալ, առնուանական սիրոյ նման, չտեղուցիւններ կը պահանջէ: Քիչ կը պատահի որ գաւակները ճիշդ ծնողաց ուղածին պէս ըլլան. ասոնք շատ անգամ անակնկալներ կը պատճառեն իրենց հօրն ու մօրը և հեռու ևն հրեշտակներ ըլլալէ: Սակայն պէտք է սիրել զանոնք ինչպէս որ են, օգնելու համար որ անոնք ըլլան ինչ որ պէտք է: Իրենց թերութիւններուն դէմ պայքարելու համար անոնց զորակիցներ ըլլալու է, իրենց ընկերները և իրենց լաւագոյն բարեկամները, շահելով և պահելով անոնց վստահութիւնը, առանց զիրենք վատեցնելու, առանց դառնացնելու, բայց միւս կողմէն առանց զանոնք չփայնելու ծայրայեղ ներդաշնակութիւն և տկարութիւն նշանակող սիրով մը: Պէտք է զանոնք պատժել զիտնալ, ոչ այնչափ ծեծով, որքան բարոյական, իմաստուն պատիժներով, առանց բարկութեան և առանց վրէժխնդրութեան զգացումի: Երբ կը պատժենք զիրենք անոնք պէտք է հասկնան ընդհակառակը թէ մենք նախ ինքզինքնիս կը պատժենք իրենց-

մէ աւելի, և թէ մեր պատիժները սիրոյ արդիւնք են. որովհետեւ որքան շատ սիրենք մեր զաւակները՝ այնքան նուազ կրնանք հանդուրժել իրենց թերութիւններուն, իրենց յուր ունակութիւններուն որոնք կը վտանգեն իրենց երջանկութիւնը: Իբր պատիժ պէտք չէ Սբ. Կրօնի համարներ օրինակել տալ: Պէտք չէ պատժենք ձախաւերութեան մը համար, առարկայ մը կոտորելուն համար. սակայն ընդհակառակը խիստ ըլլանք բարոյական թերութիւններու հանդէպ, ինչպէս ստախօսութիւնը:

Սիրոյ այդ ամենանուրբ զործին մէջ, որ զաստիարակութիւն կը կոչուի, երկու ամուսինները պէտք է կատարելապէս միանան և համաձայնութեամբ կատարեն այս մեծ պարտականութիւնը: Իրաւ է թէ սովորաբար մայրը աւելի լաւ կը դաստիարակէ՝ քան հայրը. ան ունի այնպիսի յայտնատեսութիւններ որոնք հազուադիւրս են այրերու քով, բայց ասիկա պատճառ մը չէ որ հայրը չ'օգնէ իր կնոջ՝ դաստիարակութեան աս զործին մէջ, որ թերեւ ամէնէն կարեւոր եւ ամէնէն դժուար զործն է որ մեզի կը վստահուի:

Վերջապէս պէտք չէ մոռնանք թէ այս զաւակները մերը չեն, հապա Աստուծոյ, ինչպէս կ'ըսէ Փետիալոյցի. «Ամէն մէկ երեխայ Աստուծոյ մէկ յոյսն է:» Մանուկը թանկագին աւանդ մըն է որուն համար օր մը, թերեւ ընդհուպ, հաշիւ պիտի տանք Երկնաւոր Հօրը որ զայն մեզի վստահած է որպէս զի Իրեն առաջնորդենք, քանի որ ան Իրեն կը պատկանի արդէն: Մեր զաւակները կարծես մեզի ըսէին այն ինչ որ Փիլիպպոս ըսաւ Յիսուսին. «Հայրը մեզի ցուցուր, ու հերիք է մեզի:» Մեր դաստիարակի գիրն է իսկապէս անոնց ցուցնել Հայրը մեր խօսքերով, մեր գործերով եւ մանաւանդ մեր անհատական ազդեցութեամբ: Յիսուս կ'ըսէ. — Ան

որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ: Այս խօսքը պէտք չէ՞ մեր դաստիարակութեան ներշնչիչը ըլլայ:

ԹԳՊ. Վ. ՊԵՆԱՆ

ԿՐԾՆՔԸ ՄԱՐԴՈՒՆ ԱՆՀՐԱՍԻՆՅԱՆ Ի

(Շարունակութիւն եւ վերջ)

4. Մարդը կրօնի անհրաժեշտ պիտի ունի ճշմարիտ մարդկութեամբ զաղարարական հասկնալու արեւոյն հասնալու: Գաղափարականը մտաւորապէս հասկնալ եւ զործնականապէս զայն ապրել իրարմէ բոլորովին տարբեր երկու բաներ են: Եթէ մարդը ճշմարիտ մարդկութեան մասին չիտակ և բարձր գաղափար մը ունենայ իսկ, իրեն կը պակսին պէտք եղած ոյժն ու ծանօթութիւնը, համբերութիւնն ու ներշնչումը, անոր համեմատ ապրելու համար: Ամէն մէկ բնական մարդուն վիճակին մէկ արտայայտութիւնն է Տարսնոյի Պօղոսին սաղառն աղաղակը. «Կամեցողութիւն կայ քոփս, բայց բարին զործադրելը չեմ գիտեր: . . . Ի՞նչ խղճալի մարդ եմ ես. ո՞վ զիս պիտի ազատէ այս մահացու մարմինէն:» Անոր գտած ճարն է՝ այս դժուարութեան միակ լուծումը: «Գոհութիւն Աստուծոյ՝ մեր Տէրոջը Յիսուս Բրիստոսի ձեռքովը:» «Ինձի ոյժ տուող Յիսուս Բրիստոսով ամէն բանի կարող եմ:» Աստուած Յիսուս Բրիստոսի միջոցաւ կը կատարէ մարդուն մէջ ինչ որ ան ինքնիրեն չի կրնար ընել: Աստուծոյ ոյժով կը լեցուի այն մարդը, որ Անոր ներկայութեանը կ'ապրի: Քրիստոսի հետ հաղորդակցութիւնը, Անոր խոստումները, Անոր սէրը, Անկէ աւանդած ներշնչումը, աստուածային ճշմարտութեանց պայծառ լոյսը եւ Աստուծոյ հանդէպ պատասխանատվութեան զգացումը՝ մարդու համար տեսական և կատարելալ ոյժի աղբիւր մը կը

ապահովեն դէպի ճշմարիտ մարդկութիւնը մեծնալու համար:

Շատ վտանգաւոր բան մըն է մարդկութեան գաղափարականը Քրիստոսըն առնել եւ ապա զայն մէկ կողմ դնել: այդ վիճակին մէջ գաղափարականը անպատճառ պահանջուած էն աւելի ստորին տատնանի վրայ պիտի 'ըլլայ: քանզի գաղափարականը Քրիստոս ինքն է եւ մէկը Քրիստոսը չի կրնար հասկնալ եւ թէ Անոր հետ հաղորդակցութեամբ չի ապրի եւ միշտ Անոր չնայի: Այսօր, Քրիստոսի գաղափարականէն շատ վար կը մնայ գաղափարականը այն մարդոց, որոնք Քրիստոսը կ'ընդունին եւ զԱյն կը զովեն իբր կատարեալ մարդ, բայց Անոր չեն հետեւիր, անոնք Քրիստոսէն կարգ մը բաներ փոխ առած իսկ լման Քրիստոսը մէկ կողմ դրած են: Եւ առանց Քրիստոսի քրիստոսանման կեանքի հասնիլ անկարելի է: Աւպեան սուրերն իվեր մազլցող զրօսաշրջիկ մը չի կրնար իր նպատակին հասնիլ, եթէ իր առաջնորդը ճամբաները կը բացատրէ միայն եւ ապա հաքը քաշուի: Մարդը չի կրնար կեանքի բարձր գաղաթները ելլել, եթէ չի նայիր քայլ առ քայլ իր առջեւէն գացող Քրիստոսին, եւ եթէ զինքը Անոր հետ յարաբերութեան մէջ զնոդ կապ մը չկայ:

Նկարագիրը փոխանցիկ է. բնութիւնը յարաբերութեան միջոցաւ անհատէ անհատ կ'անցնի: Քրիստոսանման կեանքը ունենալու համար անհրաժեշտ պայման է տեականօրէն Անոր հետ հաղորդակցութեան մէջ ըլլալ:

Ծ. Կրօմֆը Վարդուն անհրաժեշտ է, քանզի Վարդիպիլն հոգիին հետ խորունկ փափաքի եւ նիւննալիս կարօք Աստուծոյ հետ հաղորդակցութեան է: Մարդը պէտք ունի ոչ միայն Աստուածային շնորհքներու, այլ նոյն ինքն Աստուծոյ: Վինչպէս եղջերուն ջուրի վտակներուն կը փափաքի, այնպէս ալ իմ անձս Քիզի կը փափաքի,

«Վ Աստուած»: Մարդկային հոգիին էն խոր փափաքը եւ էն անհրաժեշտ պէտքն է ամէն կատարելութեան Աղբիւրին հետ, սիրոյ, սրբութեան եւ բոլոր առաքնութեանց կատարեալ Տիրոջ հետ հաղորդակցի ապրիլ: Մարդկային հոգիին համար բնականոն միջավայրն է միայն Աստուծոյ ներկայութիւնը եւ Անոր հետ հաղորդակցութիւնը: Ծճմարիտ մարդը հոն միայն յառաջ կուգայ, առկէ դուրս կեանք չկայ: Աստուծոյ ներկայութիւնըն է որ մարդը կը ներշնչէ եւ հոգին ամէն բարութեամբ կը սնուցանէ, առանց Աստուծոյ ապրելու ջանալ՝ արեւը դուրսը դրած, փակ դուռերու եւ պատահաններու ետեւը լամբարի լոյսով ապրիլ ջանալու կը նմանի:

Մարդ ուրախութիւն կ'զգայ Աստուծոյ հաղորդակցութեան մէջ, ինչպէս որ մանուկը կը հրճուի իր ծնողներուն ներկայութեամբ: Մարդ իր հոգիին մէջ կ'զգայ Աստուծոյ սիրոյն ջերմութիւնը, կը հիանայ Անոր իմաստութեան եւ գեղեցկութեան վրայ, կը լեցուի հաւատքով, լաւատեսութեամբ կը զիտէ իր ներկան ու ապագան, եւ կ'ուրախանայ գիտելով իր հոգեւոր ժառանգը:

«Ո՛վ Աստուած, մեր հոգիները Քիզի համար ստեղծեցիր եւ մեր հոգիները չեն կրնար խաղաղութիւն գտնել, մինչեւ որ Քու մէջը չգտնեն զայն»: »

Քեաւայ

ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՔԱԿԱՎԱ

Ներկայիս Ճարոնի մէջ կ'ապրի դէմք մը, որ Ճարոնի ընկերային կեանքին մէջ տիրական զիրքի մը տիրացած է իր բազմակողմանի ազդու գործունէութեամբ: Թօյօհիքօ Քակաւա-Սան կամ կարճ անունով Քակաւա կը կոչուի ան, որ հակառակ իր խոնարհ ծագումին բոլոր երկրին մէջ օտարին եւ տեղացիին ուշադրութիւնը գրաւած է եւ բոլորին սիրոյն

և յարգանքին առարկայ դարձեր է:

Քաղաքապետ Կեյշալ մը զաւակն է: Հայրը իր օրինաւոր կենդանին զաւակներ չունենալով հարձ (կեյշա) մը կ'առնէ, որմէ կը ծնին Քաղաքապետն և իր կրտսեր եղբայրներն ու քոյրերը: Ծաբոնի ընկերային սոսկալի ախարէն մէկն է այս կեյշա առնելու սովորութիւնը: «Իմ մայրս կեյշա մըն էր» կ'ըսէ Քաղաքապետը, «հետեւաբար չեմ ուզիր որ զուստրս ալ այդպիսի մէկը ըլլայ»:

Քաղաքապետը կամքովը միշտ ջանաց իր կեանքի մակարդակը բարձրացնել, և կրցաւ բարձր կրթութիւն մը մը ստանալ աւարտելով Թոքիոյ Ներքալիան Գոլէճը և Գօպէի Աստուածաբանական Գաբոյը, և ապա լրացնելով իր ուսումը Փրինսթըն Գոլէճի մէջ:

Իր ծագումը և ապրած միջավայրը մեծ բաժին մ'ունին Քաղաքապետի շինելու, անոր միտումներուն ուղղութիւն տալու: Կեանքի նպատակը որոշելու մէջ: Ըլլալով հարձի մը զաւակ խորապէս զգաց այդ դասակարգին թշուառութիւնը, արգահատեցաւ առ հասարակ բոլոր ընչապօրեկներու, ընկերութենէն դուրս նըկատուած ստորին դասակարգերու վերայ: Ասիքը ունենալով կարգ մը միսիօնարներու հետ կանուխէն չփման զաւուր խորապէս ազդուեցաւ անոնց կեանքէն և ուխտեց Յիսուսի հետևորդ մը ըլլալ, և իբր կեանքի նպատակ ընտրեց ինկած զանաւարդին մէջ գործել զանոնք ազնուացնելու համար:

Քաղաքապետը նոր կազմած ընտանիքով գնաց հաստատուեցաւ Գօպէ քաղաքին ստորին ազատ թաղամասը, այդ տեղի ժողովուրդին մէջ գործելու համար: Ինկած, աղքատ, այս թշուառ մարդկային բեկորներուն հանդէպ իր յուշուցած սէրը, զանոնք բարձրացնելու համար կատարած անգին զոհողութիւնները անմիջապէս զինքը պաշտելի էակ մ'ըրին այս զանաւարդին մէջ, այն-

պէս որ շատերը զինքը սկսան կոչել «ստորին թաղամասերու սուրբը»: Տասնըհինգ երկար տարիներ գործեց հասնեցաւ հրաշալի յաջողութեամբ մը, որ սոսկ այդ տեղերը ճանչցողները չկրցան զայն ճանչնալ իրենց երկրորդ այցելութեան ատեն: Քաղաքապետը վերջիս սկսաւ իր ոյժերը տրամադրել Թոքիոյ և Օպաքայի ընչապօրեկներու թաղամասերուն, ուր նորէն «սիրոյ կերպարանափոխիչ ազդեցութիւնը» սկսաւ երևան գալ:

Իր ընկերային բարեկարգութեանց ծրագիրը իրագործելու նպատակով պէտք եղած նիւթական միջոցները հայթայթելու համար Քաղաքապետը ստիպուեցաւ ուսուցչութեամբ զբաղիլ: Բայց տեսնելով որ այս ասպարէզը պէտք եղած չափով չի վարձատրեր զինքը զբաղական ասպարէզը նետուեցաւ: Եւ սկսաւ թերթերու մէջ իր փորձառութենէն քաղուած պատմութիւններ և վէպիկներ հրատարակել, որոնք անմիջապէս ուշադրութիւն գրաւեցին: 1920 ին լոյս տեսաւ իր առաջին մեծ վէպը, «Մահուան Գծին Վրայ» անունով, որ երեք տարուան մէջ 180 հազար օրինակ սպառուած ունեցաւ: Ասոր հետեւեցան ուրիշ շարք մը վէպեր որոնց երկու էն նշանաւորներն են «Արեւին Զարնոյ մը» և «Պատին Զայնը»: Եւրոպայի մէջ ալ ուշադրութիւն գրաւեցին իր վէպերը, որոնց գլխաւորները անգլիերէնի, գերմաներէնի, լահերէնի և այլ թարգմանուեցան: Այս գրքերուն բոլորն ալ կը խօսին ընկերային հարցերու վրայ, ոմանք գրեթէ իր ինքնակենսագրութիւնն են միայն, գրուած ազգու և գուրգուրալիւր ոճով մը:

Իր գրութիւնները ուշադրութիւնը գրաւեցին կատաղութեան, որ իրեն մասնաւոր պաշտօն տուաւ ուսումնասիրելու ընկերային մեծ ախտերը, աղքատութիւնը, աշխատանքը եւ ուրիշ

ան տնտեսական հարցերը: Մինչև հիմա կը վարէ մասնաւոր գրասենեակ մը այս խնդիրները քննելու համար. իր գործունէութեան այս մարզին մէջ ան երեւան եկաւ իրը յայտնի տնտեսագէտ մը:

Քակաժան իր գործունէութեան գաշար ընդարձակելով քաղաքականութեամբ ալ սկսաւ զբաղիլ, և հիմնեց ու կազմակերպեց աշխատաւորական կուսակցութիւններ. կազմակերպեց նաեւ շատ մը համագործակցական ընկերութիւններ կենսամիջոցներու սպասումին, արտադրութեան և գնումին համար: Համագործակցութիւնը Քակաժանի հումանիշ դարձած է Ճարտնի մէջ այսօր:

Շատ երկար պիտի ըլլար զրիչ նաեւ այս բազմակուսանի մարդուն գործունէութեան ուրիշ մարզերուն մասին: Ընկերութեան ասորին խաւերէն դէպ ի երկինք սլացող այս ճարտնցին ուսուցիչ, զբաղէտ, վիպասան, տնտեսագէտ, քաղաքագէտ, ընկերաբան, ելին թէպէտ, բայց ամէնէն առաջ և ամէնէն աւելի աւետարանիչ մ'է բառին կատարեալ առումով: Իր ամէն տեսակ գործունէութեան մէջ նպատակն է մարդերը Յիսուսի շահիլ, Յիսուսի հետեւողները ընել, գործնք կը կոչէ «Յիսուսի բարեկամները»: Դաւանանքներէն աւելի Յիսուսի հետ բարեկամութիւնը կը շեշտէ ան: «Բոլոր իր ընկերային գործին, վիպագրութեան, տնտեսագիտական ուսումնասիրութեանց, քաղաքական գործունէութեանց, ազգային և միջազգային հետաքրքրութեանց եւ ներքին գաղափարներուն աղբիւրն է Յիսուսի հետ գործակցելու փափաքը», ինչպէս մարդկութիւնը փրկելու համար:

Ասկէ մի քանի տարիներ առաջ ան սկսաւ համազգային աւետարանչական գործունէութեան, երեք տարուան միջոցին կայսրութեան ամէն մասը այցելելու նպատակաւ: Մեծ յաջողութիւններ, ունեցաւ ան հազարաւորները շա-

հելով Քրիստոսի: Քիչ վերջը հրաւեր ստացաւ Ճարտնի Բող. Եկեղեցիներուն հետ նոյն նպատակով գործակցելու համար: Անմիջապէս փոխեց իր ծրարիւրը նոր եռանդով փարեցաւ գործին, երկու շաբթուան ընթացքին 1500 Ճարտնցիներ քրիստոնէութիւնը ընդունեցին:

Քակաժանի կարծիքով Ճարտնի սաստկագոյն պայքարը պիտի ըլլայ նւթապաշտութեան դէմ, որուն վրայ ըրած երկու ժամուայ քարոզը սարսեց ժողովուրդը, որմէ շատեր Քրիստոսը ընդունեցին անմիջապէս: «Մարքոս կամ Քրիստոս» կ'ըսէ այս եռանդարօրը աւետարանիչը, որուն ներկայ մարտակոչն է «մէկ միլիօն հոգիներ Քրիստոսի համար»: Եւ ներկայ յաջող ընթացքով անյուսալի չէ այս գաղափարականին իրականացումը:

Սովորական մարդերէն չէ Քակաժան. ան մասնաւոր հմայքով մը կ'առնէ քննութեան և պնդողականը, անհաւատը և աստուածապաշտը, անբարոյականը և սուրբը, անուար և ուսեալը, ընչաչուրկը և հարուստը: Խորապէս կը կը հետաքրքրուի ընկերային հարցերով և բոլորանուէր կ'աշխատի գտնոյթ լուծելու, այնքան մեծ յաջողութեամբ, որուն գաղտնիքը կը գտնուի իր գոհող սէրին և քրիստոնէական նկարագրին մէջ, ներշնչուած ուղղակի Յիսուսէն, մարդուն Բարեկամէն:

Ահա մարդը, որ կառավարութեան համարումն ու վստահութիւնը շահած ժողովրդային խաւերու մանաւանդ ստորին, կարգերուն սիրաւ զբաւած, Յիսուսի ընկերացած իր անպարտելի հոգիին անխորտակելի լծակով կը ճգնի Ճարտնի կեանքի մահաբազմաբարձրը:

Տ. Ճ. Խ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԷԹԻ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՅ ԱՒԵՏ.
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Մայիսի առաջին երկու կիրակիները Աղեքսանդրէթի, Փարթըսլըի, Պէյլանի և Գըրըզլսանի Հայ Աւետ. եկեղեցիները այցելելու պատենոթիւնը ունեցայ: Մայ. 4ի կէսօրէն մինչև Մայիս 5 կիրակի կէս օրը Պէյլան անցուցի: Կիրակի առաւօտ սովորական պաշտամունքի պահը քարոզութեան և Ս. Հաղորդութեան յատկացուցինք: Վեր. Ը. Փարթըիճի հետ միասին ըրած մեր այցելութենէն յետոյ Պէյլանի մէջ հեռեւեալ փոփոխութիւնները տեղի ունեցած են: —

Կէսաւերակի ձև առած եկեղեցիին ձեղունքը չինուած, պատուհանները բուրձովին նորոգուած, պատերը ձերմիցուած և ուրիշ փոփոխութիւններ եղած ըլլալով առջի տղիղութենէն ազատուած էր: Տեղւոյն խաւով Միւտիրին նախաձեռնութեամբ երեք հայ յարանուանութիւնները իրենց զպրոցները միացուցած ըլլալով, երկու վարժապետի և մէկ վարժուհիի ձեռքին տակ Պէյլանի մանչերն ու աղջիկները, մեր օգասուն եկեղեցիին մէջ լաւ կրթութիւն ստանալու գեղեցիկ պատենոթիւնը կը վայելին: Շարժումն ընթացքին Հալէպի Հայց. եկեղեցւոյ և թեմին բարեջան առաջնորդը, Գեր. Տ. Արտաւազդ Մ. Վրդ. Սիւրմէ-հան, սոյն զպրոցը այցելած և աշակերտները ուշի ուշով քննելով զո՞հ մնացած էր. և երեկոյին, Հայ Աւետ. եկեղեցւոյ բեմէն խուսն բազմութեան քարոզած և համերաշխութեան մասին ժողովուրդը խրատած է: Նաև Հայ Բող. համայնքէն տիար Միսաք Պէհաւորեանի բնակարանին մէջ ճոխ սեղանի մը շուրջ տեղւոյն երեւելիներուն հետ լաւ տեսակցութիւն մը ունեցած է: Այս առտենները ես Փարթըսլը կը գտնուէի:

Պէյլանի եկեղեցական գործերն ալ լաւ են: Մեր շրջիկ աւետարանիչ Պրն.

Յովհաննէս Շնորհօքեանի մի քանի ամսուան ծառայութիւնը օգտակար եղած է: Սակայն՝ կառավարական կեդրոնը Պէյլանէ Գըրըզլսան փոխադրուելուն պատճառաւ այս տեղին կարեորութիւնը երթալով կը պակսի:

Կէս օրէ հոքը Աղեքսանդրէթ իջայ: Բարոյը և իրիկուան աղօթածողովը, երկուշարթի իրիկուան Ս. Հաղորդութեան պաշտամունքը, յառաջիկայ կիրակի օրուան երկու քարոզութիւնները օգտակար կերպով անցան: Միշտ լաւ բազմութիւն մը ներկայ էր, որ լարուած ուշադրութեամբ մտիկ կ'ընէր խօսուած խօսքերուն: Այս եկեղեցին յոյսով լեցուն է, լաւ ապագայ ունի: Այս տարի իրեն յատուկ քարոզիչ չունէր, գրեթէ ամէն կիրակի Հալէպէն գալոյ հոգեւոր պաշտօնեաներով իրենց հոգևոր պէտքերը հոգացուցան: Յառաջիկային համար տարիէ մ'ի վեր Աթէնքի Սիւրջ սպ. Բիշօքը Աստուածաբանականի հետեւող Տիար Կարապետ Գըրզլսանի հրաւիրուած է: Տէրջմէ կը խընդրենք որ անոր աշխատանքը Տէրջմէ գործին մէջ յաջողութեամբ պսակուի: Աղեքսանդրէթի Հայ Աւետ. ժողովուրդը եկեղեցւոյ շէնքի մը համար 100 ոսկիի արժողութեամբ գետին մը գնեց, որոյ 50 ոսկին ժողովուրդը ինքը տուաւ:

Փարթըսլըի հին սիրուն գիւղը և եկեղեցին ալ այցելելով երեք օր հոն մնացի: Հոս ալ Աստուծոյ խօսքով ժողովուրդը քաջալերելէ և մխիթարելէ զատ, Ս. Հաղորդութիւն և մկրտութիւն կատարեցինք: Այս սիրուն գիւղը և եկեղեցին իրեն աշագուծի քարոզիչով և պղծտիկ զպրոցով զոհ է:

Նորէն Կիրակի իրիկունը Պէյլան և երկուշարթի իրիկունը Գըրըզլսան անցուցինք: Գըրըզլսանի մէջ անցուցած իրիկունէն և ժամերէն շատ զո՞հ մնացի: Այս եկեղեցիին երկտասարդութիւնը եռանդով կ'աշխատի: Իրենց քարոզիչը

Պրն. Գ. Թումանյան, եւ զրեթէ բոլորն ալ երիտասարդներէ բաղկացած ժողովուրդը՝ սիրով եւ հռանդով փարած են եկեղեցին արթուն պահելու գործին:

Կ. Յ. Յ.

ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆ ՏՂՈՒ ՄԸ ՊԱՏԿԱՄԸ

Օր մը, երբ մեր ընտանեկան աղօթքը կ'ընէինք չորս պղտիկներու հետ, որոնց ամենամեծը ինը տարեկան էր, իրենց վառվառն աչքերը ինծի ուղղած կը հարցնէին միաբերան. «Մա՛յր, մեր այսօրուան աղօթքի նիւթը ի՞նչ է»:

Մեր օրական նիւթն էր. «Աստուած զթած եւ ողորմած է»:

Բացատրելի անոնց Աստուծոյ անհուն ողորմութիւնը, յայտնելով որ Ան կը հոգայ, կը կերակրէ ու կը պաշտպանէ մեզ:

—Մա՛յր, Աստուած աղքատներուն ալ հաց կուտա՞յ, վեց տարեկան տղաս հարցուց:

—Այո՛, տղա՛ս, պատասխանելի, Աստուած աղքատներն ալ կը կերակրէ:

—Մա՛յր, Աստուած թռչուններու ալ կերակուր կուտա՞յ, չար մարդերու ալ կերակուր կուտա՞յ, կը շարունակէին հարցնել պղտիկներս:

Ընթրիքի սեղանի վրայ էինք, վեց տարեկան տղաս շատ վշտալի կերպով հարչուց. «Մա՛յր, ինչո՞ւ Աստուած աղքատներուն հաց չի տար»:

—Տղա՛ս, առտուն Ս. Գրքէն սորվեցար թէ Աստուած բոլոր աղքատներուն ալ հաց կուտայ», պատասխանելի:

—Այո՛, մայր գուն առաւ այդպէս ըսի, բայց քիչ ատաջ կին մը քովս եկած էր, կուլար ու կ'ըսէր որ իր հօրը ձեռքը կոտրած է եւ չի կրնար գործիլ եւ ընտանիքով երկու օրէ ի վիճակին: Եթէ Աստուած բոլոր աղքատներուն հաց կուտայ, ինչո՞ւ այս աղքատին ալ չի տար: Մա՛յր, անոնք սատանային զա-

ւակներն են, ատո՞ր համար Աստուած իրենց հաց չի տար:

—Ո՛չ, տղաս, առտուն չսորվեցա՞ր որ Աստուած թէ բարիներուն եւ թէ չարերուն կերակուր կ'ուտայ:

—Շատ լաւ, մայր, ինչո՞ւ ուրեմն այդ աղքատ ընտանիքին չի տար:

—Տղա՛ս, Աստուած անոնց բաժինը մեզի տուած է որ մենք ալ անոնց տանք, պատասխանելի:

—Ուրեմն մա՛յր, մեր հացին կէսը առտոնցն է:

—Այս հարցումը մինչեւ սրտիս խորերը թափանցեց, ու շուտով կը խորհէի թէ ինչպէ՞ս պատասխանեմ մինչ ան շարունակ նոյն հարցումը կը կրկնէր:

—Ա՛խ, մա՛յր, ինչո՞ւ չես խօսիր, շուտ պատասխան տուր ինծի, ուրեմն մեր հացին կէսը աղքատներուն է:

Յուզմունքէս աչքերս արտասուքով լեցուած, «Ա՛խ տղաս, այո՛, պէ՛տք է որ մեր հացին կէսը աղքատներուն ըլլայ», պատասխանելի:

Պղտիկին աչքերը փայլեցան. զուարթ դէմքով ու մեղմ ցած ձայնով մը պատասխանեց. «Այո՛, մա՛յր, թող այնպէս ըլլայ, քանզի աղքատները մեզք են. ու Աստուած անոնց բաժինը մեզի տուած է»:

Մօտ երկու ամիս անցաւ այս խօսակցութենէն վերջ. բայց ամեն օր երբ պղտիկներուս հետ կը բոլորուիմ մեր սեղանին շուրջ, նոյն հարցումը կը կրկնուի սրտիս մէջ ու կը յանգիմանուիմ այս պղտիկ տղուն պատգամովը:

Այսօր մեր ազգին աղքատիկ բնկորները կտոր մը հացի կարօտով կը տառապին, մինչ շատեր իրենց դրամները ոգելից ըմպելիի եւ ուրիշ անվայել հաճոյքներու համար կը ծախսեն: Երանի թէ այսպիսիները գիտնային թէ այդ դրամներով իրենց հոգիներն եւ մարմինները փճացնելու չեն, հապա շատ մը կարօտները ապրեցնելու են: Կը ցա-

Հայ գաղթականները, հակառակ բազմաթիվ անհաճախումներին, կարևոր բաժին մը ունեցած են ամերիկեան մշակութիւն և կեանքին մէջ: Երկու հայեր շերամաբուծութեան մէջ այնչափ յայտնի յաջողութիւն մը ունեցած էին որ 1656ի Դեկտեմբերի 15-ին Վիրճինիոյ Ժողովը սա որոշումը կուտայ. «Թէ Գէորգ անուն հայուն՝ մետաքսի առևտուրը քաջալերելուն և երկրին մէջ ֆաբրիկան հասարակուն նպաստակով, 4000 փառնետ ծխախոտ տրուի ժողովին կողմանէ:»

Ներկայիս Նոր-Օրլէանաբնակ Տր. Վարդան Օսիկեան Ամերիկայի մեծագոյն շերամաբուծարանին վարիչն է: Տր. Օսիկեան տասը տարուայ փորձերէն վերջ յաջողած է 18 տարբեր բնական գոյներով մետաքս արտադրել, կերին տեսակը և չափը փոխելով:

Արեւելեան գեղեցիկ գործերը հայերու կողմանէ ներածուեցան: Առաջ, գորգի հրապարակին միակ տէրն էին հայերը, և ներկայիս գորգի վաճառականութեան հարիւրին 50ը իրենց ձեռքն է:

Մածուելը, որ բժիշկներուն կողմէն իրր անողջարար սնունդ կը յանձնարարուի, Տր. Տաւրբեանի կողմէ ներածուած է:

Ամերիկեան թղթագրամին կանաչ գոյնը հնարուած և կառավարութեան ծախուած է Տր. Սերոբեանի կողմանէ:

Գալիֆորնիոյ հայերը երկրագործութեան մէջ կարեւոր ծառայութիւններ մատուցած են երկրին: Բոլոր Գալիֆորնիոյ այգիներուն տարածութիւնն է 250000 ակրոն, որուն հարիւրին 40ը Թրէզնոյի հայերուն կողմէ կը մշակուի, և կը կառավարուի: Մանթ Գասպա ձմերուկը հայերուն կողմէ ներածուած է: Թրէզնոյի Առաքելեան խաղաղակաշի եղբորքին վրայ կը վարէ ձմերուկի բոլոր առևտուրը, և չահած է «Ձմերուկի թագաւոր» անունը: Գաղթային գրա-

սենեակը այսպէս կը տեղեկագրէ. «Թրէզնոյի շրջանին մէջ... ուրիշ սեւ մէկ ցեղին երկրագործներէն աւելի հայ մշակներու գաղթային գործունէութիւնները եւ յառաջդիմութիւնը կարեւորութիւն կ'առանան:»

Հայերը ուրիշ ցեղերու հետ բազմաթիւ թրենց թիւին համեմատ մեծագոյն թիւով ազատ արտահատականներ արտադրած են, որոնցմէ ոմանք իրենց ասպարէզին մէջ մեծ հռչակ չահած են: Հարվըրտի, Գորնէլի, Գոլոմպիարի, Փէնսիլվէնիարի, Շրպակոյի, Ուիսքոնսինի և Թրինիթիի նման համալսարաններու և Գոլէճներու մէջ 20է աւելի հայ փրոֆէսորներ և ուսուցիչներ կը գտնուին: Մեծ Պատերազմի միջոցին հայ գիտնականներէն ոմանք գիտական խուզարկումներ կատարելու մէջ մեծ ծառայութիւն մատուցին կառավարութեան: Անոնց մէջէն կ'արժէ յիշել հարապետ Վարապետ Գալաշեանը, որ Հարվըրտի փրոֆէսորներէն է և իր Հարվըրտի Բժշկական Առաքելութեան պետը այնքան մեծ ծառայութիւններ մատուց իր ատանական բանականութեամբ: Դէմքի վրայ իր կատարած հիանալի գործողութիւնները բոլոր աշխարհին ուշադրութիւնը գրաւած է: Պատերազմի մէջ իր ծառայութիւններուն համար Անգլիա գայն պատուեց Ս. Գէորգի և Ս. Միքայէլի պատուանշաններով: Մ. Նահանգներու մէջ 200էն աւելի բժիշկներ և ատամնարոյժներ կան: Անոնցմէ ոմանք իրենց ճիւղին մէջ մասնագէտ ամալնորդներ կը նկատուին, կ'արժէ յիշել Նիւ Եօքքի Պէլլիու հիւանդանոցին բժիշկը Տօքթ. Մինաս Կրէկլըրին, Տիթրոյթի մէջ Միշիկէնի Համալսարանին փրոֆէսորներէն Տօքթ. Յ. Մալէճեանը, որ ծառայեց փոխ զննապետի աստիճանով, նաեւ Տօքթ. Ա. Հէճինեանը, որ Մըրոի հիւանդանոցի գլխաւոր վիրաբոյժն է և առաջնակարգ վիրաբոյժ

մը՝ բոլոր միջին նահանգներու մէջ:

Մանիլա ցամաք ելլող առաջին գին- ուորը Հայ մըն էր: Պատերազմի միջո- ցին 10000 է աւելի հայեր ծառայելին Ամերիկեան բանակին մէջ:

Յիսուսէ աւելի Հայ եղբայրականներ տարբեր յարանուանութիւններէ ամե- րիկեան եկեղեցիներուն մէջ կը քարո- ղեն:

Կարգ մը հայեր գեղարուեստի մէջ յայտնի զիրքեր գրաւած են: Ամերի- կայի առաջնակարգ արձանագործներէն մէկն է Հայկ Բողիկեան, որ Սան Ֆրան- չիսկոյի վերաշինութեան յիշատակ շի- նած իր կոթողին համար մրցանակ մը շահեցաւ, եւ որ Համաշխարհային Ցու- յահանդէսի գեղարուեստական բաժնին զատաւորներէն մէկն էր:

Հայերը մասնաւորապէս նշանաւոր հանդիսացած են ճարտարագիտութեան մէջ: Մի քանի հարիւրէ աւելի Հայ ճարտարագէտներ, քիմիագէտներ եւ ճարտարապետներ կան, որոնցմէ ոմանք կարեւոր զիրքերու տիրացած են: Ներ- կայիս Ամերիկեան Համալսարանն ու եւ Գոլէճներու մէջ 300 է աւելի Հայ ու- սանողներ կան:

Քաղուած

(ՎԵՐ.) Մ. ԳՍԼԱՅՃԵԱՆ ի
Անգլ. գրութեան

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՆԱՊԱՏԸ ՊԱՐՏԷՋԻ ՊԻՏԻ ՎԵՐԱԾԵՆ

Աշխարհի էն ընդարձակ անապատը Սահարա, քիչ ատենէն բոլորովին պիտի կերպարանափոխուի: Այս անապատին մէջ կը գտնուին շատ մը չորացած մեծ լիճեր, որոնց կը միանան շատ մը չոր- ցած գետեր: Բոլոր այս հողամասը Մի- ջերկրական ծովու մակերեսէն ցած կը գտնուի: Գիտուններ ահա կ'ուզեն այս պարագայէն օգտուիլ եւ ջրանցքի մը միջոցաւ Միջերկրական ծովը այս լի-

ճերուն եւ գետերն փոխադրել, եւ այս կերպով յառաջ քերել 50,000 քա- ռակուտի մզոն տարածութեամբ ծով մը: Գիտուններուն ընկիւքը հոս պիտի վեր- ջանայ եւ մնացածը պիտի կատարէ բը- նութիւնը: Հարաւէն գէպ ի հիւսիս արշաւող չոր հովիտը այս ծովուն վրա- յէն անցնելով բոլոր չորացած ջուրը գէպ ի լեռները պիտի տանին, ուր ա- նոնք անձրիի փոխուելով պիտի ուռուին հողը: Սահարայի հողը շատ քարերի բլուրով այս հնարագիւտ միջոցաւ աշ- խարհի երկրապարտական կարեւոր կեդ- րոններէն մէկը պիտի ըլլայ ան:

ՀԵՌԱԿԻՄԱՆԱՐՈՒԹԻՒՆ

Գործիք մը հնարուած է որ հեռա- զրի միջոցաւ հարիւրաւոր մզոն հեռ- ուէն գիրի կը շարէ: Առաքիչ մասին ծայրը մեքենայ մը թուղթէ նեղ ժապա-ւէն մը կը ծակէ: Այս ծակուած երի- զը ինքնաբերաբար ուրիշ մեքենայի մէջ կը մզուի, որ հեռուէն ընդունող կայանին մէջ ծակուած երկրին մէկ օ- րինակը շինել կուտայ: Այս երկրորդ ծակուած երկրը կ'անցնի ուրիշ մեքե- նայի մէջ, որ իր կարգին գիրը շարող մե- քենան մեծ արագութեամբ գործի կը մղէ, եւ մեքենական «տպող» մը զրկը- ուող խօսքերը կը գրէ միւսնոյն ատեն:

ԾԱՌԵՐՆ ԱՆ ԿԸ ԽԵՂԴՈՒՄ

Շատ մը ծառեր անկենդան փայտի կը վերածուին օդի չզոյութեանէն կամ սակաւութեանէն շնչահեղձ ըլլալով: Սառա ջուրը, կարծրացած հողը արմատ- ները կ'արգիլեն օդ առնելէ, նմանապէս ուէ պատճառով արտադրուող carbon dioxide եւ ուրիշ կազերը ծառը շնչահեղձ կ'ընեն: Ասոր իր գարման կը գործա- ծեն խտացուցիչ մեքենաներով հողին մէջ խտացեալ օդ փչել, շատ մը չորացող ծառեր այսպէս կ'սկսին նոր կեանքով մը վերածաղկիլ:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

«ԵԴԵՄ»-ի Մէջ

Համխառն (Հալէպ) Հայ Աւետ. Եկեղեցիին մանուկներն էին, որ շինած էին «Եդեմ»ը, Կիրականօրեայ դպրոցը, որ Մայիս հինգի Կիրակի իրիկուան ժամը 7ին տուաւ իր Զատիկ հանդէսը: Դըպրոցը կը բաղկանար չորս բաժիններէ, Մանկապարտէզ (4-5), Սկսնակներ (6-8) Նորասիններ (9-11), Պատանիներ (12-14) և 22 դասարաններէ, որոնց Իւրաքանչիւրին պիտը կը կրէր զրօշ մը վրան իր կարգին անունը գրուած: Դպրոցականները կարգով ներս մտան: Իւրաքանչիւր բաժին հանդէսին մասնակցեցաւ արտասանութիւններով և երգերով: Ապա Միսիւ Մէրիլ կալճ խրատական մը տուաւ և Ս. Գրքի մասին հարցումներ ըրաւ աշակերտներուն, որոնք կը պատասխանէին լաւ կերպով:

Աշակերտները խաչկութենէն կենդանի պատկեր մը ներկայացուցին, որ շատ խոր կերպով ազգից ներկաներուն վրայ:

Շատ հաճելի էր տեսնել ուսումնաւարտ կարգին զէմքերը, որոնք Վեր. Կ. Քէթէնճեանի հայրական խրատները լսելէ վերջ ստացան իրենց վկայականները:

«Հայր Մեր»ով վերջացաւ հանդէսը, որուն փայլուն և յաջող ըլլալուն մէջ մեծ բաժին ունեցան Պատ. Ա. Հատիտեան, դպրոցին վերահսկիչը և ուսուցչութիւնը:

ՆԵՐՍԱՅ ՄԸ

ՎԵՐ. ՆԵՐՍԷՍ ՍԱՐԵԱՆ ԻՐ

ՀՐՍԺՍՐԱԿԱՆԸ ԵՏ ԿՍՈՒՆԷ

Դամասկոսէն կը գրուի. —

Վեր. Ն. Սարեան մեր հովիւը, արտաքին կարգ մը պատճառներով իր հըրաժարականը տուած էր Եկեղեցիին: Այս հրաժարականը շանթահարիչ տպա-

ւորութիւն մը ունեցած էր Եկեղեցիին վրայ, քանզի ժողովուրդին և իր հովիւին յարաբերութիւնը ջիւմ և անկեղծ սէրէ կը բաղկանար միայն. հետեւաբար վերջին մի քանի ամիսներէ ի վեր թէ հովիւը և թէ ժողովուրդը խոր վիշտի մէջ թաղուած ըլլալով Եկեղեցին տագնապալի վայրկեանի կ'անցնէր: Ուրախ ենք որ Տէրը լսեց մեր աղօթքները և հովիւը ու ժողովուրդը նորէն իրարու շնորհեց: Այնպէս որ մեր հովիւը ժողովուրդին սէրին և թախանձին առջեւ տեղի տալով իր հրաժարականը ետ առած է, և յօժարած է առաջուան պէս իբրեւ մեր հովիւը շարունակել իր պաշտօնավարութիւնը:

Ի զիմաց

Տաճարի Հայ Աւետ. Եկեղեցւոյ

Սալիպէ Խուտէյատ

ԿԻՊՐՈՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Կրպրահայութեան Իրկու Կեդրոններն են Լարնաքա և Նիկոսիա քաղաքները: Առաջինին մէջ կը գտնուի մօտ 1000 հայեր, որոնցմէ 900ը Հայ Առաք. ներէ և 100ը Հայ Աւետ. ներէ կը բաղկանայ:

Առաք. համայնքը ունի վեցամեայ նախակրթարան մը 200 աշակերտներով, իսկ Աւետ. ժողովուրդը ունի 30 աշակերտ պարունակող դպրոց մը, հինգ պաշտօնեաներով, որոնցմէ երեքը այցելու: Շատ մը Հայ պատանիներ, թիւով 49, իրենց երկրորդական ուսումը Ամերիկեան (Երից.) Հայ Սփռչի մէջ կը առնեն, որուն ուսողական գիտութեան կարող և սիրուած ուսուցիչն է Պր. Մանուէլ Բասունի:

Կայ նաեւ անկազմակերպ և անհովիւ փոքրաթիւ Հայ Կաթոլիկ համայնք մը:

Վեր. Սիրական Աղպապեան հովիւն է Աւետ. Եկեղեցիին, որ կապուած է Ամերիկեան Երից. Պօրտին:

Նիկոսիոյ Հայութեան թիւն է 1800, որուն 2009ը կը կալմէ Աւետ. հասա-

րակութիւնը, տակաւին անկազմակերպ: Վեր. Մանուշակեան կամաւոր կերպով իր տանը մէջ կը կատարէ կրօնական ժողովներ:

ՀԱՍԿԴԻ ՀԱՅ ԱԶԳ. Կ. ԽԱՉԸ

Հայ Ազգ. Կ. Խաչի նոր հրատարակուած տեղեկագրէն կը քաղենք հետևեալը. —

1 Յունվ. 926-1 Յունվ. 929 ի 12 ամսուայ շրջանին Հայ Կ. Խաչը ունեցեր է 1469.08 օսմ. ոսկի մուտք եւ 1453.22 ոսկի ելք, ունի պատրաստ գումար 15.86 ոսկի, 150 ոսկինոց պահեստի մը մթերանոցին մէջ եւ 327 ոսկի պարտք: Հասոյթին 64.52 ոսկին հայթայթուած է Կ. Խաչի 135 վճարող անդամ եւ անդամուհիներէն, 263.53 ոսկի դարմանատան հասոյթէն եւ դեղօրայքէն, 330.94 ոսկին օտար աղբիւրներէն եւ մնացածը զանազան ազգային մարմիններէն եւ հանդէսներէ: Ծախքին կարևոր մէկ մասը 980.20 օսմ. ոսկի, կատարուած է դարմանատան գետնին գնումին եւ շէնքի շինութեան համար, որուն աւարտումին համար տակաւին պէտք կ'ըզացուի 500 օսմ. ոսկի:

Քսան Էինդ ամսուան մէջ ընդունուած հիւանդներուն թիւն է 11,283, որուն 4432 ը' մանուկներ, եւ կատարուած է 30395 բժշկական խորհրդակցութիւններ:

Հայ Կ. Խաչը կը վարէ եօթը անդամներէ բաղկացեալ միջյարանուանական մարմին մը, որուն գիւանը կը կազմեն Վեր. Ա. Ա. Շիրաճեան Ա. պետ, Տօքթ. Պօղոսեան Ա. դպիր եւ Տիար Մ. Մըսրիլեան գանձապահ:

ՏՐ. ԱԼԹԸՐ ԻՆՉՈՒ ԶԱԼԿ ԵԿԱԻ

Համար Երից. առաքելութեան միսիօնար Տր. Ալթըր, որ վերջերս իր կընոջ հետ Ամերիկայէն դարձած է եւ Հիւսս. Սուրիոյ համար Ամառնային Ս. Գրքի

Դպրոցին ներկայացուցիչն է, քիչ առաջ Հալէպ գտնուեցաւ Երիցական եւ Հայ Աւետ. եկեղեցիներուն մէջ յիշեալ դպրոցի կազմակերպութեան մասին կարգադրութիւններ ընելու համար:

ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱԻԱՔՈՅԹ

Հալէպի Ամերիկեան Պօրտի գանձապահ Վեր. Է. Փարթըրիչի դէպի Ամերիկա ուղևորութեան առթիւ Հալէպի Ազգիկէ եկեղեցիին վարի սրահը, Մայիս 22 ին, հրաժեշտի հաւաքոյթ մը սարքուած էր: Վեր. Փարթըրիչ մ. զի ծառօթ է իր բարեոք ծառայութեամբը իբր Ամերիկեան նպաստամացոյցի պաշտօնեայ Հայաստանի մէջ: Ատենէ մ'ի վեր Սուրիոյ մէջ եւ վերջին երկու տարիներէ ի վեր Հալէպի մէջ կը գործէր ան, իբր Պօրտի միսիօնար, եւ հիմա 15 ամսուայ արձակուրդով կը մեկնի Ամերիկայ եւ կը յուսացուի որ վերստին Հալէպ վերադառնայ:

ՆՈՒԷՐ ՄԸ

Ամերիկաբնակ բնիկ Ա. յնթապցի Տիար Մովսէս Գարամանուկեան, որդին Կարուճաղայի, տառը օսմ. ոսկի կը նուիրէ Մանչերու Բ. Վարժարանին, վարք ու բարքի, մարզանքի եւ շարադրութեան մէջ յաջող աշակերտներուն իբր մրցանակ բաշխուելու համար:

ԱԶԻԶԻՅԷԻ ԱՒԵՏ. ԵԿԵԴԵՅԻՒՆ

ԲԱՐԵՋՍՐԴՈՒՄԸ

Հալէպի Ազգիկէի եկեղեցիին վարի սրահին ծեփը կատարուեցաւ մօտաւորապէս 80 օսմ. ոսկի ծախքով, որուն 30ը նոյն եկեղեցիին Ե. Ք. Զանից Միութեան կողմանէ հայթայթուած էր անցեալ տարի:

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՎԵՐԱԶՍՐԹՆՈՒՄԸ

Հալէպ իսլամ իգական սեռին մէջ կարեւոր շարժում մը սկսած է ծաւալ գտնել: Իսլամ կրնէր ամիսներէ իվեր աշխատած և վերջապէս «էլ Նահտաթուն Նիսախէ» անուն ընկերութիւն մը կազմած են, որուն առաջին ընդհանուր պաշտօնական հաւաքոյթին մէջ կարգ մը հրեայ և քրիստոնեայ կիներ ալ հրաւիրուած էին: Այս հաւաքոյթին մէջ երկու իսլամ կիներու ճասերլուշազրու են, և կը թարգմտեն այս շարժումին սղին:

Տիկ. Ագիզէ Բէշատ Ալէմէտտին այսպէս արտայայտուեցաւ. «Կինը հիմա չէ այն ինչ որ առաջ էր, նէ չէ այդ նախկին տկար միշտ դժգոհ, բանտարկեալ, հանդիստի եւ ծուլութեան դատապարտուած էակը. այլ իր համբերութեամբը եւ Զանքերովը կենդանի գործոն մարդկային արարած մը: Մեղք է, քոյրեր ձեր ձեռքերը անդրադ ձգել, ձեր հոգին՝ պարապ. մեղք մըն է ձեր զոհարները ձեր մէջ թաքուն պահել: Ժամանակ է արդէն ձեր պարտականութիւնը կատարելու կեանքի համար:»

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԿՐ

Աղստ քաղաքապետին Չարս Տիքնիսի
գրուածքներէն

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐԼԻԻ ՈԳԻՆ

Աքուրճի պաշտօնատեղիին դուռը բաց էր, զիտմամբ միշտ բաց կը թողէր որպէս զի կրնար տեսնել իր զրապիրը՝ որ անդին տխրատեսիլ, ցուրտ խցիկի մը մէջը նստած՝ նամակները կ'օրինակէր, զրապիրն այս սենեակը այնքան փոքր էր որ սենեակէ բուլի տաշտի մը կը նմանէր: Աքուրճ խիստ փոքր կրակարան մը ունէր, իսկ զրապիրին կրակը աւելի քիչ էր, այնքան քիչ որ երկտասարդին

ձեռքերը ցուրտէն թմրած ըլլալուն համար հազիւ կրնար շարունակել նամակներու ընդօրինակութիւնը. խեղճը ինչ ընէր. չէր կրնար ածուխէն քիչ մը առնել, քանի որ ածուխին ամանը Աքուրճի սենեակին մէջ էր, եւ էթէ Աքուրճ այդ բանը տեսնելու ըլլար, անտարակոյս զինքը պաշտօնէն կը ձգէր անմիջապէս: Ուստի զրապիրը բաւականացած էր իր մեծ վերարկուն վրան առնելով՝ ու մերթ ընդ մերթ մոմին ճրագովը ձեռքերը տաքցնելով: Խեղճը կ'երեւակայէր թէ այդ կերպով կրնար տաքցնել իր ձեռքերը, սակայն չէր կրնար, որովհետեւ պէտք եղածին չափ զօրաւոր երեսկայութիւն չուներ:—

«Շնորհաւոր Ծնունդ, քեռի՛, ամէն տարի բարով հասնիք այս օրերուն», զոչեց զուարթ ձայն մը: Աքուրճ յանկարծակիի եկաւ. այդ սփռէր, և տեսաւ իր քեռորդին որ անմիջապէս ցցուեցաւ իր դէմը: Ասիկա անուշիկ աչքերով սիրուն տղայ մըն էր, կ'երեւի թէ ձիւնին ու մշուին մէջէն եկած ատեն քիչ մը արագ քալած էր որ երեսները կասկարմիր եղեր էին, աչքերը կը փայլէին, քիչ մըն ալ քրտնէր էր:

«Պա՛հ» զոչեց Աքուրճ ինքզինքին դալով, «Կրողը տանի Ծնունդն ալ, . . . »

— Ի՛նչ, քեզի, կրողը տանի կ'ըսես Ծնունդին, չէ՛, չէ՛, մի ըսեր, ատանկ մի ըսեր:

— «Ըսի, նորէն կ'ըսեմ, «Շնորհաւոր Ծնունդ», հա՛ հա՛, քեզի ի՞նչ, զու՛ն ի՞նչ իրաւունք ունիս երջանիկ ըլլալու, չէ՞ որ աղքատ եմ:»

— Հաւ, պատասխանեց պատանին, զո՛ւն ինչ իրաւունք ունիս բարկանալու կամ տխրելու, չէ՞ որ հարուստ եմ:

Աքուրճ պատասխան մը չը գտնելով «Գնա, կորսուէ, ըսաւ, կրողը տանի քեզ ալ Ծնունդն ալ» ու նորէն իր զործին պարապեցաւ:

«Մի բարկանալ, քեռի», ըսաւ պա-

տանին քաղցրութեամբ:

«Զի բարկանամ, հապա ի՛նչ ընեմ»,
զոչեց մօրեղբայրը, «Աշխարհը ապուշ-
ներով լեցուեր է, Շնորհաւոր Մնունդ,
Շնորհաւոր Մնունդ զեօրինն անցնի Շը-
նորհաւորն ալ, անշնորհքն ալ, ուս Մն-
ունդ ըսածնին ի՛նչ է օր, օր մը՝ որ
գրամ չեն վճարեր, օր մը իրենց տարի-
քին վրայ տարի մէն ալ կ'աւելցնէ, իսկ
հարստութեանը վրայ փարա չ'աւելցնէր:
Եթէ ինծի մնար, ու «Շնորհաւոր Մնունդ»
ըսողներուն ամէնը մէկ ամանի մէջ կ'ե-
ռացնէի ու միւսնոյն փոսը կը թաղէի,
զոնէ իրենք «Շնորհաւոր Մնունդ» բռն-
էն կ'ազատէին, մենք ալ իրենցմէ:»

«Քեզի, իրա՞ն կ'ըսես», հարցոյց
տղան աղերսող ձայնով մը:

«Տղաս, մնունդը առ, հեղ զորոս
տար, և թող որ ես իմ մնունդս պահեմ:»

«Բայց, քեսի, զոն չես պահեր կոր
մնունդը:»

«Ինծի օգուտ մը չունի որ պահեմ
զայն, տղաս, զնա՛, զուն պահէ զայն,
քեզի շատ օգուտ ունենայ թերեւ:»

«Այո», պատասխանեց տղան, «Շատ
բաներ կան որոնք ինծի կրնային օգտա-
կար ըլլալ, բայց ես զանոնք չարաչար
գործածած եմ, և կը խոստովանեմ թէ
անոնք ինծի օգտակար եղած չեն: Բայց
վստահ եմ որ մնունդը շատ մը կերպի-
րով օգտակար եղած է ինծի. նախ, երբ
մնունդի առթիւ պատահած դէպքերը
միտքս կը բերեմ, սիրտս անուշ պատկա-
ռանքով մը կը լեցուի, երկրորդ, մեծ
հաճոյքով կը մտածեմ թէ ամբողջ օրա-
ցոյցիս մէջ ամէնէն անոյշ օրը մնունդի
օրն է, այն օրը մարդիկ աւելի քաղցրա-
բարոյ, աւելի ներող, աւելի հեղափո-
րոյր, ու իրարու աւելի հաճելի կըլլան,
և իրենց փափուած սրտերը ազատօրէն
խրարու կը բանան, և կը խորհին իրենց-
մէ ցած վիճակի մէջ գտնուողներու մա-
սին, կը յիշեն թէ անոնք իրենց պէս,
իրենց համահաւասար մարդիկ են, և թէ

օր մը ամէնքն ալ պիտի մեռնին: Աս-
տի, սիրելի մօրեղբայր, եթէ մնունդը իմ
զրպանա ոսկիի կամ արծաթի կտոր մը
չէ գրած, բայց կը հաւատամ թէ ինծի
օգտակար եղած է, և ապէ՛ վերջն ալ
պիտի ըլլայ, ասոր համար է որ կ'ըսեմ
«Շնորհաւոր Մնունդ, ամէն տարի բարով
հասնինք այս օրերուն:»

(Շարունակելի (2))

ՍՏՍՑԱՆՔ

MASSIS անգլիերէն ամսաթերթին
առաջին տարուան թիւ 6 և 7: Տա-
րեկան բաժնեկրին է 12 շիլլինկ.

հասցէ.

118 Fellows Road
Hampstead, London, N. W. 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՈՐԱԿՐԱԿԱՆ

Եկեղեցական Միութիւն

ՅՕԴՈՒՄԵՆԵՐ

Կեանքի Ուղղացոյցը

ՓՐՕՖ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆ

Մեղրական Սեր ԹԻԿ. ՏԻԿ. Վ. ՊԵԿԵԱՆ

Կոնֆը Մարդուն Անհրաժեշտ է

ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԼԱՍԵԱՆ

Քախախտ Տ. Ճ. Խ.

Աղետահրեքի Հայ Առհ. Եկեղեցիները

ՎԵՐ. Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Վեց Տարեկան Տղու Մը Պատգամը

ՏԻԿ. Ռ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

Հայեր Ամերիկայի Մէջ

ՎԵՐ. Մ. ԳՈՂԱՅՃԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

Սրտօնատէր Վեր. Կ. Յ. Յարութիւնեան

Տնօրէն-Խմբագիր Տ. Ճ. Խրտեան

Տարեկան բաժնեկրին— Սուրիտ, 1.50

Սուր. ոսկի. արտասահման 1.50 տոլար:

Հասցէ—

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE